

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

2.1. Պետական բյուջեի ցուցանիշներ

Ըստ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության նախնական տվյալների, 2000թ. հունվար-փետրվարին¹ ՀՀ պետական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները կազմել են 19371,5² մլն. դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 15,8 %-ով:

2000թ. հունվար-փետրվարին պետական բյուջեն ամբողջապես համալրվել է ներքին աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Բյուջեի եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 82,6 %-ը կազմել են հարկային եկամուտները՝ 16010,5 մլն. դրամ, ընդ որում հարկային եկամուտների 62,8 %-ը մուտքագրվել է անուղղակի հարկերի գծով (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում նշված ցուցանիշը կազմել է 64,3 %): Միաժամանակ, ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են հարկային եկամուտների 46,1 %-ը, իսկ ակցիզային հարկինը՝ 16,7 %-ը: Ակցիզային հարկի գծով եկամուտների 43,3 %-ը բաժին է ընկել ՀՀ ներմուծվող ենթակցիզային ապրանքներին:

Ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են 9,5 %-ով, իսկ ակցիզային հարկինը՝ աճել է 2,4 %-ով:

2000թ. հունվարին հարկային եկամուտների 21,4 %-ն ապահովվել է շահութահարկի և եկամտահարկի գծով մուտքերի հաշվին: Նախորդ տարվա հունվար-փետրվար ամսվա համեմատ շահութահարկից մուտքերն նվազել են 17,1 %-ով, իսկ եկամտահարկից՝ 10,4 %-ով:

1999թ. հունվար-փետրվար ամսվա նկատմամբ 2000թ. նույն ժամանակաշրջանում գույքահարկի գծով մուտքերը նվազել են 19,3 %-ով, իսկ հողի հարկի գծով մուտքերը նվազել են 20,3 %-ով և կազմել են համապատասխանաբար՝ 21,7 և 10,6 մլն. դրամ:

Պետական բյուջեի ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 4,5%-ն ապահովվել է պետական տուրքի հաշվին՝ (868,1 մլն. դրամ)՝ կազմելով նախորդ տարվա հունվար-փետրվար ամսվա պետական տուրքից մուտքերի (960,6 մլն. դրամ) 90,4 %-ը:

Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները կազմել են 2490,1 մլն. դրամ կամ ընդամենը եկամուտների և պաշտոնական տրանսֆերտների 12,9 %-ը, որոնց կառուցվածքում ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը կազմել են 84,4 %:

Կապիտալի գործառնություններից եկամուտները կազմել են 2,8 մլն. դրամ, որից պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների օտարումից մուտքերը՝ 2,3 մլն. դրամ կամ 82,1 %-ը:

¹ հաշվարկները կատարված են վիճակագրության կողմից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված հունվար և փետրվար ամիսների առանձին տվյալների հիման վրա

² հունվար ամսվա պետական բյուջեի եկամուտների մեջ ներառված չեն ՀՀ Պետական եկամուտների նախարարության նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի գումարները

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը

(տոկոսներով ընդամենի նկատմամբ)

	1999 թ.	2000 ¹ թ.	
	հունվար-փետրվար	հունվար	հունվար-փետրվար ²
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	100	100	100
<i>այդ թվում՝</i>			
Ընդամենը եկամուտներ	99,8	100	100
<i>որից՝</i>			
Ա. Ընթացիկ եկամուտներ	99,8	100	100
1. հարկային եկամուտներ	72,7	79,2	82,6
<i>այդ թվում՝</i>			
ավելացված արժեքի հարկ	35,4	32,5	38,1
շահութահարկ	8,4	8,4	8,3
եկամտահարկ	8,8	8,7	9,4
ակցիզային հարկ	11,4	15,4	13,8
գույքահարկ	0,1	0,1	0,1
հողի հարկ	0,1	0,1	-
մաքսատուրք	4,8	4,7	5,5
հաստատագրված վճարներ	3,3	3,3	2,8
բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներ	0,4	6,0	4,6
2. պետական տուրք	4,2	4,7	4,5
3. ոչ հարկային եկամուտներ	22,9	16,1	12,9
Բ. Կապիտալի գործառնություններից եկամուտներ	-	-	-
Գ. Պաշտոնական տրանսֆերտներ	0,2	-	-

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2000թ. հունվար-փետրվարին կազմել են 15481,9³ մլն. դրամ, որից ընթացիկ ծախսերը՝ 14520,1 մլն. դրամ կամ ընդամենը ծախսերի 93,8 %-ը: Ընթացիկ ծախսերում 4703,7 մլն. դրամը կամ 32,4 %-ը կազմել են տրանսֆերտները (ընդամենը ծախսերի 30,4 %-ը), իսկ ապրանքների և ծառայությունների ձեռք բերման հետ կապված ծախսերը ընթացիկ ծախսերում կազմել են 6248,2 մլն դրամ կամ 43,0 %-ը:

Պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 2303,2 մլն. դրամ կամ ընթացիկ ծախսերի 15,9 %-ը (ընդամենը ծախսերի 14,9 %-ը): Ներքին պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 1567,3 մլն. դրամ, արտաքին պարտքինը՝ 735,9 մլն. դրամ:

Պետական բյուջեի ծախսերի վերաբերյալ տվյալները, ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման խմբերի

	(մլն. դրամ)	
	2000թ. հունվար	2000թ. հունվար-փետրվար ⁴
Ընդամենը ծախսեր	2905,6	15481,9
%-ով ընդամենի նկատմամբ	100	100
<i>այդ թվում՝</i>		
01 Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ	826,1	2005,1
%-ով ընդամենի նկատմամբ	28,4	13,0
02 Պաշտպանություն	750,8	3241,7

¹ աղյուսակում գետեղված են 22.03.2000թ. դրությամբ տրամադրված տվյալները

² հաշվարկները կատարված են վիճակահարարության կողմից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված հունվար և փետրվար ամիսների առանձին տվյալների հիման վրա

³ հունվար ամսվա պետական բյուջեի ծախսերի մեջ ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից ստացվող միջոցներով իրականացվող նպատակային ծրագրերի, ինչպես նաև ՀՀ Պետական եկամուտների նախարարության նյութական խրախուսման և սոցիալական զարգացման ֆոնդի գումարները

⁴ ՆՅԹՆԻՄ ձև I ԻՅԹԻՅ՝ ԿՀԻՍՍՀԻՍՀՊՎՊՐԻՍՆԻՊԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՑԻ ԾՈՒՅՆԱԿԱՆ ԶԱՐԳԱԳՄԱՆ ՖՈՆԴԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ
³ ԵՅՕԿՄ իՍԵՄ ձև ՆՕՍՅ իՅ՝

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

	2000թ. հունվար	2000թ. հունվար-փետրվար ⁴
%-ով ընդամենի նկատմամբ	25,8	20,9
03 Հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն	102,0	1093,9
%-ով ընդամենի նկատմամբ	3,5	7,1
04 Կրթություն և գիտություն	150,0	1353,6
%-ով ընդամենի նկատմամբ	5,2	8,7
05 Առողջապահություն	-	485,8
%-ով ընդամենի նկատմամբ	-	3,1
06 Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն	0,6	807,1
%-ով ընդամենի նկատմամբ	-	5,2
07 Սշակույթ. սպորտ և կրոն	33,2	182,2
%-ով ընդամենի նկատմամբ	1,2	1,2
08 Բնակարանային-կոմունալ տնտեսություն	-	0,8
%-ով ընդամենի նկատմամբ	-	-
09 Վառելիքային էներգետիկ համալիր	-	23,6
%-ով ընդամենի նկատմամբ	-	0,2
10 Գյուղատնտեսություն, անտառային և ջրային տնտեսություն և ձկնաբուծություն	-	10,4
%-ով ընդամենի նկատմամբ	-	0,1
11 Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ	0,7	48,3
%-ով ընդամենի նկատմամբ	-	0,3
12 Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	150,0	238,2
%-ով ընդամենի նկատմամբ	5,2	1,5
13 Այլ տնտեսական ծառայություններ	-2,9	5,1
%-ով ընդամենի նկատմամբ	-0,1	-
14 Հիմնական խմբին չդասվող ծախսեր	895,1	5986,1
%-ով ընդամենի նկատմամբ	30,8	38,7

2000թ. հունվար-փետրվարին պետական բյուջեի հավելուրդը կազմել է 3889,6 մլն. դրամ:

Պետական բյուջեի կատարման վերաբերյալ տվյալները

	1999թ.	2000 ¹ թ.	
	հունվար-փետրվար	հունվար	հունվար-փետրվար ²
Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը			
<i>մլն. դրամ</i>	23010,2	7747,5	19371,5
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	25,1	22,0	20,0
<i>այդ թվում՝</i>			
հարկային եկամուտներ			
<i>մլն. դրամ</i>	16744,1	6130,9	16010,5
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	18,3	17,4	16,5
պետական տուրք			
<i>մլն. դրամ</i>	960,6	365,2	868,1
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	1,0	1,0	0,9
ոչ հարկային եկամուտներ			
<i>մլն. դրամ</i>	5262,0	1248,8	2490,1
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	5,7	3,6	2,6
կապիտալի գործառնություններից եկամուտներ			
<i>մլն. դրամ</i>	-	2,6	2,8
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	-	-	-
պաշտոնական տրանսֆերտներ			

¹ աղյուսակում գետեղված են 22.03.2000թ. դրությամբ տրամադրված տվյալները

² հաշվարկները կատարված են վիճմախարարության կողմից ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացված հունվար և փետրվար ամիսների առանձին տվյալների հիման վրա

2. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

	1999թ.	2000 ¹ թ.	
	հունվար-փետրվար	հունվար	հունվար-փետրվար ²
<i>մլն. դրամ</i>	43,5	-	-
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	0,1	-	-
Ծախսեր, ընդամենը			
<i>մլն. դրամ</i>	19157,7	2905,6	15481,9
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	20,9	8,3	16,0
Պակասուրդ (-), հավելուրդ			
<i>մլն. դրամ</i>	3852,5	4841,9	3889,6
<i>%-ով ՀՆԱ-ի նկատմամբ</i>	4,2	13,8	4,0

Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության տվյալների, 2000թ.մարտի 1-ի դրությամբ ընդամենը չմարված հարկային պարտավորությունները (ապառք, տույժ և տուգանք), ներառյալ նախորդ տարվանից մնացորդը, կազմել են 120116,5 մլն. դրամ, որից միայն ապառքների գումարը՝ 49837,1 մլն.դրամ կամ ընդամենը պարտավորությունների 41,5 %-ը: 2000թ. փետրվարի 1-ի համեմատ ապառքների տեսակարար կշիռը ընդամենը պարտավորություններում աճել է 1,1 տոկոսային կետով, իսկ 1999թ. մարտի 1-ի համեմատ աճել՝ 0,2 տոկոսային կետով: 2000թ. մարտի 1-ի դրությամբ ընդամենը ապառքներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ավելացված արժեքի հարկին՝ 38,8 % և շահութահարկին՝ 25,1 %:

Հարկային եկամուտների գծով ապառքների կառուցվածքը

	1999թ. 1.03	2000թ.		
		1.01	1.02	1.03
Ընդամենը հարկային ապառքներ	38595.4	48213.3	47362.0	49837.1
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	100	100	100	100
այդ թվում՝				
ավելացված արժեքի հարկ	19738.1	19552.8	18275.3	19327.2
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	51.1	40.5	38.6	38.8
շահութահարկ	6622.6	11744.5	11721.1	12517.5
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	17.2	24.4	24.7	25.1
ակցիզային հարկ	1323.8	1437.8	1301.4	1292.9
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	3.4	3.0	2.8	2.6
հողի հարկ	5117.5	6394.9	6511.4	6620.1
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	13.3	13.3	13.7	13.3
այլ հարկային ապառքներ	5793.4	9083.3	9552.8	10079.4
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	15.0	18.8	20.2	20.2

Միաժամանակ, 2000թ.մարտի 1-ի դրությամբ ընդամենը հարկային եկամուտների գծով գերավճարները, ներառյալ նախորդ տարվանից մնացորդը, կազմել են 19738,5 մլն. դրամ և 2000թ. փետրվարի 1-ի համեմատ աճել՝ 8,7 %-ով: